

9. ՏԵՂԵԿԱՏՎԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում, Ծառայության կողմից, ըստ տարիների հրապարակվել և վիճակագրական տեղեկատվության սպառողներին են տրամադրվել (ներառյալ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն)) հետևյալ քանակի վիճակագրական նյութեր. 2004թ.՝ 73, 2005թ.՝ 85 և 2006թ.՝ 75 անուն:

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայության վիճակագրական հրապարակումներն իրականացվել են ինչպես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, այնպես և արտաքին ֆինանսական աջակցությամբ և ըստ տպաքանակների կազմել 2004թ.՝ 26610, 2005թ.՝ 11650 և 2006թ.՝ 12040 միավոր:

Ծառայության հիմնական օպերատիվ վիճակագրական հրապարակման՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների բովանդակությունը ներկայացվել է ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի մշակած Տվյալների տարածման համակարգի հատվածների: Տեղեկատվական ամսական զեկույցներն ամսական պարբերականությամբ ներկայացվել են հակիրճ, եռամսյակային պարբերականությամբ ներկայացվել են առավել մանրամասն, ընդլայնված ու ընդհանրական: Եռամսյակային պարբերականությամբ զեկույցներում ընդգրկվել են «Անկախ պետությունների համագործակցության երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումներ» (ըստ Անկախ պետությունների համագործակցության Միջպետական վիճակագրության կոմիտեի տվյալների), «Հետաքրքրաշարժ վիճակագրություն», «Մեթոդաբանական պարզաբանումներ» և «Ծառայության փաստացի հրապարակումների ցանկը» հավելվածները:

Չանգվածային լրատվամիջոցներով տարածման համար, ամսական պարբերականությամբ պատրաստվել և տրամադրվել է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները», «Հայաստանի Հանրապետության սպառողական գների ինդեքսը», եռամսյակային պարբերականությամբ՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ - տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագիր» մամուլի հաղորդագրությունները, ինչպես նաև առանձին թեմատիկ հաղորդագրություններ:

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայության աշխատակազմի մարզային գործակալությունները (ներառյալ նաև Երևան քաղաքի գործակալությունը) հրապարակել են «Մարզի (Երևան քաղաքի) սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցներ (11 անուն, պարբերականությունը հաշվի առած՝ 44) և 21 անուն վիճակագրական զեկույցագրեր (պարբերականությունը հաշվի առած՝ 1027):

Վիճակագրական տեղեկատվության մատչելիության և միաժամանակյա հասանելիության ապահովման նկատառումներով, բոլոր հրապարակումները զետեղվել են Ծառայության ինտերնետային կայքէջում:

Այդ համատեքստում պարբերաբար համալրվել է նաև Ծառայության բաց գրադարանի գրադարանային ֆոնդը, որի արդյունքում 2004թ. հունվարի 1-ի դրությամբ առկա 6100 միավորի դիմաց 2007թ. հունվարի 1-ի դրությամբ առկա գրադարանային ֆոնդը կազմել

է 8210 միավոր (համապատասխանաբար՝ 2005թ.՝ 6791, 2006թ.՝ 7550), կամ աճել 1,3 անգամ: Վիճակագրական գրականության ֆոնդը համալրվել է (ավելի քան 75 տոկոսը) ինչպես Ճառայության վիճակագրական հրապարակումների, այնպես և աշխարհի տարբեր երկրների վիճակագրական ծառայություններից և միջազգային կազմակերպություններից (մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային Բանկի, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ), Անկախ պետությունների համագործակցության Միջպետական վիճակագրական կոմիտեի և այլն) ստացված գրականության հաշվին:

Ծառայության գրադարանում են զետեղվել նաև Ծառայության վիճակագրական հրապարակումների (ժողովածուներ, տարեգրքեր, տեղեկագրեր և զեկույցներ) 2-ական օրինակները:

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայության բաց գրադարանից օգտվել է 2851 այցելու (այդ թվում՝ 2004թ.՝ 971, 2005թ.՝ 990 և 2006թ.՝ 890), այդ թվում՝ գիտական հաստատություններից՝ 28.4%, կրթական ոլորտից (դասախոսական անձնակազմ, ուսանողներ, ասպիրանտներ)՝ 45.0%, պետական մարմիններից՝ 17.5% և այլ (միջազգային կազմակերպություններից, լրագրողներ, քաղաքացիներ)՝ 9.1%:

Վիճակագրական տեղեկատվության մատչելիության նկատառումներով պայմանավորված հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները նաև Ծառայության ինտերնետային կայքի կատարելագործման և վիճակագրական հրապարակումների զետեղման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում Ծառայության ինտերնետային կայքին վիճակագրական տեղեկատվություն սպառողները դիմել են մոտ 177,2 հազ. անգամ, այդ թվում՝ 2004թ.՝ 41,0 հազ., 2005թ.՝ 57.0 հազ. և 2006թ.՝ 79,2 հազ. անգամ: